ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«31» հունվարի 2025թ. ՆՄՈ/ 190 Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշման N 4 հավելվածը և ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության ներկայացված 22,01,2025թ թիվ Ն/261-2025 դիրքորոշումը, առաջնորդվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 07.08.2023թ N 103-Ն հրամանի պահանջներով, գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչների հավելավճարի տրամադրումն իրականացնելու նպատակով՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին «Հանրակրթության ծրագիր» ծրագրի «ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող պետական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի սահմանում» միջոցառման շրջանակներում տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված 57 748 300

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

(հիսունյոթ միլիոն յոթ հարյուր քառասունութ հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարից 36 567 300 (երեսունվեց միլիոն հինգ հարյուր վաթսունյոթ հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը վերաբաշխել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայության թվով 9 (ինը) հանրակրթական դպրոցներին՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստ Ա. Հովհաննիսյանին՝ կնքել գումարի հատկացման պայմանագրեր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-01-31 14:14:59 GMT+4
Հաստատված է էՍՏԻ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված 1
ՀՀ Արմավիրի մարզպետի
2025 թվականի հունվարի 31 -ի
N ՄՈ/ 190 - Ա որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ «ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՄԻՆՉև 100 ԱՇԱԿԵՐՏ ՈՒՆԵՑՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ «ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ» ՀՈԴՎԱԾՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ

h/h	*դպրոցի անվանումը*	*ՀՀ դրամ*
1	*2*	*3*
1	Արգինայի միջնակարգ դպրոց	***7418400***
2	Արտամետի միջնակարգ դպրոց	***5276200***
3	Արևադաշտի միջնակարգ. դպրոց	***4902500***
4	Երվանդաշատի միջնակարգ դպրոց	***3586500***
5	Լեռնամերձի հիմնական դպրոց	***1552600***
6	Հուշակերտի միջնակարգ	***2070300***
7	Տալվորիկ հիմնական դպրոց	***4413500***
8	Ֆերիկի միջնակարգ դպրոց դպրոց	***4063800***
9	Բերքաշատի միջնակարգ դպրոց	***3283500***
Ընդամենը		***36567300***

Недействительная подпись

VERIFIED OCSP 31.01.2025 14:12:24 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ